ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 19.11.2026թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Լուսինե Արսենյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վերգինե Թառոյան
	Գոհարիկ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Շելեգոն

Ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**
   Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից չեն ներկայացվել
   Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխան են,** բացառությամբ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի, «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի, «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի և «Այ-Սոլուշն» ՍՊԸ -ի կցած հայտերի, մասնավորապես՝
   - «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կցված հայտում Հավելված 1-ում /ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:
   - «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի կցված հայտում Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը սյունակները չի համապատասխանում հրավերի պահանջներին:
   - «ՊՐՈՖՏԵՍ» ՍՊԸ-ի կցված հայտում Հավելված 1.3-ում /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր/ ծածկագիրը լրացված է սխալ:
   - «Այ-Սոլուշն» ՍՊԸ –ի կցված հայտում Հավելված 1.3-ում /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր/ ծածկագիրը լրացված է սխալ, ինչպես նաև Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում լրացված չեն ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիր սյունակները:

Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և կցել շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի նոյեմբերի 23-ին ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝		Լուսինե Արսենյան
Հանձնաժողովի անդամներ՝		Վերգինե Թառոյան
		Գոհարիկ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Լիանա Շելեգոն